ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/10» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ՀԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 15-ը օգոստոսի 2018թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ մթերքի պլանավորման և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Տերյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ.Տերյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Կարագի» ձեռքբերման նպատակով կազմակերպված « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/h	Մասնակցի անվանում
1	«Կոլմի» ՍՊԸ
2	«Տարգովիյ Դոմ «Դանսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:.

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ.Տերյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Կոլմի» ՍՊԸ, որտեղ քանի որ կազմակերպությունը հանդես է գալիս համատեղ գործունեությամբ /կոնսորցիումով/ «Մոլոչնայա կոմպանիա Նովոգրուդսկիե դառի» ԲԲԸ հետ, ներկայացված հայտի Հավելված N 1-ում բացակայում է գործընկեր 1-ի ՀՎՀՀ-ն և էլեկտրոնային փոստի հասցեն և համատեղ հայտով հանդես գալու համար ներկայացված «Մրցույթին համատեղ մասնակցության համաձայնագիրը» գնահատող հանձնաժողովին հնարավորություն չի ընձեռում ամբողջությամբ գնահատել վերջինիս համապատասխանությանը ՀՀ կառավարության առ 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 31-րդ կետի 7-րդ ենթակետի ա) պարբերությամբ սահմանված փաստաթղթին, մասնավորապես՝ հանդիսանում է այն արդյո՞ք համատեղ գործունեության պայմանագիր, սահմանված չէ համատեղ

գործունեության պայմանագրի գործողության ժամկետը (առնվազն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով մրցույթի շրջանակներում կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետի ավարտը և ներկայացված համաձայնագրի 3-րդ կետով սահմանված է, որ գործընկեր 1-ը պատասխանատվություն է կրում միայն իր «մասնագիտական փորձառություն» և «ֆինանսական պատմություն» մասերով, այնինչ՝ կոնսորցիումի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրով սահմանված կողմերի պարտավորությունների կատարման ընթացքում: Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 21.08.2018թ. ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում տալ պարզաբանում և շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցը չի պատասխանել ծանուցմանը, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից «Կոլմի» ՍՊԸ հայտը մերժվեց:

«Տարգովիյ Դոմ «Դանսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ /չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ/ կողմից ներկայացված հայտում հայտի ապահովումը ներկայացված է «word» տարբերակով, որը տրված է ՊԱՕ ԿԲ <Центр-инвест> բանկի կողմից, որի իսկությունը ստուգելու համար հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը գնահատող հանձնաժողովի որոշմամբ 21.08.2018թ. հարցում է կատարվել ՀՀ Կենտրոնական Բանկ և վերջինիս առաջարկով՝ 03.09.2018թ. նաև ՀՀ ՊՆ սպասարկող «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, որին ի պատասխան ստացվել է 11.09.2018թ. մուտք 8347 գրությունը, ըստ որի ՍՎԻՖԹ համակարգի միջոցով ստացված տեղեկատվության համաձայն հաստատվել է վերոնշյալ բանկային երաշխիքի թողարկման փաստը և ստորագրող անձանց տվյալ գործառույթն իրականացնելու լիազորություն ունենալու հարցը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության պահանջները և այն հանգամանքը, որ վերոնշյալ բանկային երաշխիքի բնօրինակը սահմանված կարգով պետք է ներկայացվի որակավորումը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման ժամանակ, գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի հայտը գնահատել համապատասխան հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ.Տերյան)

3.1 « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակ	Նախահաշվային գումար	1-ին տեղ գրաղեցնող մասնակից			Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Կարագ	կգ	114045.8	335294652	«Տարգովիյ Դոմ «Դանսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ	331873278		«Կոլմի» ՍՊԸ	269908393.33	323890072

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով ընթացակարգում հայտերի գնահատման արդյունքում միայն «Տարգովիյ Դոմ «Դանսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ կողմից ներկայացված հայտն է գնահատվել համապատասխան հրավերի պահանջներին գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, գնի նվազեցման նպատակով 18.09.2018թ. ծանուցվել է մասնակցին 24.09.2018թ. բանակցությունների անցկացման վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից լիազորված անձը ներկայացել բանակցություններին, սակայն առաջարկված գինը թողել է անփոփոխ: Հաշվի առնելով, որ «Տարգովիյ Դոմ «Դանսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ և պայմանագիր կնքելու դեպքում մասնակիցը չի վճարելու ԱԱՀ, սակայն նրա փոխարեն ԱԱՀ-ն վճարվելու է Պատվիրատուի կողմից, մասնակցին առաջարկվել է ԱԱՀ-ն վճարել մասնակցի կողմից առաջարկված ընդհանուր գնից, ինչի վերաբերյալ մասնակիցը տվել է իր համաձայնությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր գրաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ.Տերյան)

4.1 **26.09.2018թ.՝** հայտերի բացման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում 1-ին տեղ գրաղեցնող է ճանաչվել «Տարգովիյ Դոմ «Դանսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ -ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի *«Տիպանդական միջոցներ»* որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Գ.Տերյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Տերյան)

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/10» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Տ. Հարոյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան